ցեղից՝ սէրհատից*)՝ գաւառաց՝ գաւառա-
պետաց. եդ անուանս և սահմանս քաղա-
քաց՝ շինից՝ տանց՝ դաստակերտաց՝ զօրաց
և զօրագլխաց. և յՄրքունիս եդ Թագա-
դիր 'ի Բագրատունեաց ցեղէ, որք յազ-
գէն Իսրայելացւոց խառնեցան 'ի Հայս.
եդ Օձինակիր, Ճաշ'իր, Գինեպան՝ որք են
Գնունիք՝ 'ի վերայ գինոյ, և Արծրունիք՝
'ի վերայ Թռչնոց, Սպանդունիք՝ 'ի վերայ
զենլոց. Սարնապանս, Գոնապանս՝ և այլ
այնպիսիս կարգաւորեաց, (և իշխեաց) 'ի
Մծբին ամս ԻԲ. և մեռաւ քաջապէս:

Արշակ՝ որդի Վաղարշակայ՝ (Թագա-
ւորեաց) ամս ԺԳ: Սա նախանձաւոր և
հետևօղ լեալ առաքինութեանցն, հայրե-
նի քաջութեամբ և նորոգութեամբ յաղ-
թօղն 'ի պատերազմի՝ դերեաց զազգն Պոն-
տոսի. և յեզր ծովուն Պոնտոսի՝ արձան
կանգնեաց. որում Յոյնք՝ իբրև Աստու-
ծոյ՝ երկրպագեցին:

(*) Սահման, սահմանագլուխ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան